ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

Պետական աջակցության տրամադրման նպատակով սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայություններ մատուցող իրավաբանական կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող անձանց ընտրության համար 2020 թվականի դեկտեմբերի 15-ի N 209-Ա/1 հրամանով հաստատված մրցութային հանձնաժողովի արդյունքների ամփոփման նիստի

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն 3, 334 սենյակ

26.08.2021թ. ժամը 11:00

Նիստին ներկա էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ *Տաթևիկ Ստեփանյան*
/նախարարի տեղակալ/

Հանձնաժողովի անդամներ՝

Հ. Մուրադյան	Ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչության պետ
Ք. Հովհաննիսյան	Հավասար հնարավորությունների ապահովման վարչության պետ
Ա. Մկրտչյան	Ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության՝ բյուջետավորման բաժնի պետ
Ա. Հարությունյան	Ինտեգրված սոցիալական ծառայությունների բաժնի պետ
Յու. Հարությունյան	Իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ
Դ. Դադալյան	Հրավիրված փորձագետ

Հանձնաժողովի քարտուղար՝ Սուսաննա Ավետիսյան
/գնումների համակարգման բաժնի մեթոդիստ/

Օրակարգ

1. Մրցույթի արդյունքների ամփոփման նիստ

Պետական աջակցության տրամադրման նպատակով սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայություններ մատուցող իրավաբանական կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող անձանց ընտրության համար մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) արդյունքների ամփոփման նիստը կայացավ ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշմամբ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 208-Ա/1 հրամանով և հրավերով սահմանված պահանջներին համապատասխան: Արդյունքների ամփոփման նիստը վարեց հանձնաժողովի նախագահ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տ. Ստեփանյանը:

ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման, 28-րդ կետի համաձայն ***հանձնաժողովի նիստը դռնփակ էր***:

Հանձնաժողովի նախագահ Տ. Ստեփանյանը հանձնաժողովին ներկայացրեց նիստի օրակարգը, որն ընդունվեց հանձնաժողովի կողմից:

Հանձնաժողովի քարտուղար Ս.Ավետիսյանը հայտարարեց մրցույթների արդյունքները, ինչպես նաև արձանագրեց հետևյալ չկայացած մրցույթները.

Ծրագրի անվանում	Մասնակիցների անվանում	Հրավերի պահանջների Համապատասխա-նություն	Պահանջվող փաստաթղթերի առկայություն	Փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին	Ֆինանսական նախահաշվի արժեքը (ՀՀ դրամ)	Հայտերի հետկանչման փոփոխ. հայտերի վերաբերյալ հարցումներ պատասխան
«Սոցիալական շտապօգնություն»	Հայ առաջադեմ երիտասարդություն ՀԿ	Կազմակերպության կողմից ներկայացված հայտը, փաստաթղթերի ձևաչափերը պահպանված են և համապատասխանում է հրավերի պահանջներին	Առկա են՝ ՁԵՎ N 1 ՁԵՎ N 2 ՁԵՎ N 3 ՁԵՎ N 4 ՁԵՎ N 5 ՁԵՎ N 6 Կազմ.գրանցման վկայականի պատճեն Ընդամենը՝ 14 էջ	Կազմակերպության կողմից ներկայացված հայտում փաստաթղթերը կազմված են հրավերի պահանջներին համապատասխան	1.850.000	Հայտերի հետկանչման, փոփոխության, հարցումների և պատասխանների մասին տեղեկատվությունը բացակայում է

Հայտերի գնահատման արդյունքները՝

«Սոցիալական շտապօգնություն»

N	Լոտ	Կազմակերպության անվանում	Պարզաբանում
1	Լոտ 1	Հայ առաջադեմ երիտասարդություն ՀԿ	Կազմակերպության կողմից ներկայացված հայտի բովանդակային ուսումնասիրության ժամանակ հանձնաժողովի անդամները հայտնաբերեցին հետևյալ անհամապատասխանությունները. 1. Ձև N2 ծրագրային առաջարկում կազմակերպությունը նշել է, որ՝ ✓ կազմակերպելու է առավելագույնը 3 ակցիա այն դեպքում, երբ հրավերով պահանջվում է առնվազն 3 ակցիաների կազմակերպում, ✓ համագործակցելու է առավելագույնը 3 առևտրային կազմակերպությունների (բարերարների) հետ այն դեպքում, երբ հրավերով պահանջվում է առնվազն 3 առևտրային կազմակերպությունների (բարերարների) հետ հուշագրի կամ համաձայնագրի առկայություն:

			2. Կազմակերպության կողմից ներկայացված երաշխիքային նամակը տրված է իր իսկ հայտատուի՝ «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ի նախագահի կողմից, սակայն երաշխիքային նամակը պետք է տրամադրի այն կազմակերպությունը, որը երաշխավորում է ծրագրի իրականացման համար տրամադրել 3.920.000 ՀՀ դրամ:

Չկայացած մրցույթի հիմնավորում՝

ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման 32-րդ կետի համաձայն ***«Սոցիալական շտապօգնություն»*** մրցույթը չի կայացել քանի որ կազմակերպության կողմից ներկայացված հայտը չի համապատասխանել հրավերի պայմաններին:

Հանձնաժողովի նախագահ՝ ..... Տ. Ստեփանյան

Հանձնաժողովի անդամներ՝

Հ. Մուրադյան .....

Ք. Հովհաննիսյան .....

Ա. Մկրտչյան .....

Յու.Հարությունյան .....

Դ. Դադալյան .....

Հանձնաժողովի քարտուղար՝ ..... Ս. Ավետիսյան

26.08.2021թ.